Հավելված N 16
ՀՀ կառավարության 2026 թվականի
մարտի 26-ի N 383 - Ն որոշման

## ՈՒՂԵԿՑՈՐԴՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Ուղեկցորդի որակավորումը դադարեցվում է, եթե՝

1) ի հայտ են եկել «Զբոսաշրջության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-5-րդ մասերով սահմանված հիմքերը կամ որակավորվող անձը զրկվել է որակավորման վկայականից.

2) որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումից հանվել է.

3) որակավորման վկայականի ժամկետը լրացել է, և որակավորված անձը չի անցել սույն որոշմամբ սահմանված Հավելված 11-ի 4-րդ կետով նախատեսված վերապատրաստում և նույն հավելվածի 10-րդ կետով նախատեսված քննության արդյունքում անձը չի ստացել որակավորման նոր վկայական.

4) ճանաչվել է անգործունակ.

5) մահացել է.

6) չի անցել առողջության տարեկան պարտադիր զննությունը կամ զննության արդյունքներով հայտնաբերվել է, որ տառապում է սույն որոշմամբ հաստատված Հավելված 9-ի 4-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիվանդությամբ.

7) լրացել է կյանքի և առողջության ապահովագրությունը, և չունի կյանքի և առողջության ապահովագրության համար նոր պայմանագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ